Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահի
«19» մայիս 2021 թվականի N 46-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Կոմիտեի խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման համապատասխան աշխատանքների կատարումը,

2) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված վարձակալության պայմանագրով (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) սահմանված Կոմիտեի՝ (Վարձատուի) համապատասխան իրավունքների և պարտավորությունների իրականացման ապահովումը,

3) վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածով նախատեսված «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Վարձակալ) հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ)՝ ջրամատակարարման շարունակակություն, մատակարարվող ջրի որակ, եկամուտ չգոյացնող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում), բաժանորդների բավարարվածություն), կատարման հսկողության ապահովման վերլուծությունը՝ Վարձակալության պայմանագրով նախատեսված Վարձատուի գործառույթների շրջանակներում: Վարձակալի հաշվետվությունների ուսումնասիրությունների հիման վրա առաջարկությունների և եզրակացությունների ներկայացումը,

4) Վարձակալի կողմից ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման և համակարգերի օգտագործման (շահագործման) նկատմամբ հսկողության ապահովումը և աջակցությունը՝ Վարձակալության պայմանագրով սահմանված գործառույթների շրջանակներում,

5) Վարձակալի «Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի» (այսուհոտ՝ ՊԿԱԾ) նախագծի ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը: ՊԿԱԾ-ի իրականացման ընթացքի ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ ներկայացվող հաշվետվության վերլուծությունը, ինչպես նաև ՊԿԱԾ-ի շրջանակներում չնախատեսված կապիտալ ծախսերի ուղղությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը: Կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից կազմակերպվող ՊԿԱԾ-ի շրջանակներում կատարված աշխատանքների (գույքի) ընդունման-հանձնման աշխատանքներին մասնակցությունը,

6) անկախ տեխնիկական աուդիտորի (այսուհետ՝ ԱՏԱ) հետ համագործակցության ապահովումը: ԱՏԱ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, այդ թվում հաշվետվությունների ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը՝ հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) վերաբերյալ,

7) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի նախնական փորձաքննության գործընթացին մասնակցությունը,

8) ջրային հողերի ու դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումների և նորմերի սահմանման գործընթացին մասնակցությունը,

9) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի արդիականացման և նորերի կառուցման հետ կապված ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքներին մասնակցությունը և առաջարկությունների ներկայացումը,

10) համապատասխան իրավական ակտերի, այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի օգտագործման (շահագործման) բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը և առաջարկությունների ներկայացումը,

11) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ ՀԾԿՀ) Վարձակալի կողմից ներկայացվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) սակագների վերանայման վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը մասնակցությունը և կարծիքի ներկայացումը: ՀԾԿՀ-ի կողմից ընդունվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտների վերաբերյալ որոշումների նախագծերի քննարկմանը մասնակցությունը և առաջարկությունների ներկայացումը,

12) Վարձակալի կողմից չսպասարկվող շուրջ 570 բնակավայրերի (այսուհետ՝ չսպասարկվող բնակավայրեր) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներին մասնակցությունը և առաջարկությունների ներկայացումը.,

13) չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի խնդիրների տեղում ուսումնասիրությունը և դրանց հրատապությունից ու անհրաժեշտ ներդրումների պահանջից ելնելով կլաստերների ստեղծումը հաշվի առնելով Կայուն զարգացման նպատակների (այսուհետ՝ ԿԶՆ) միջոցառումների ծրագրի 6-րդ բաղադրիչով սահմանված թիրախային ցուցանիշները և ժամկետները: Չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ու ծառայությունների բարելավմանն ու նոր համակարգերի կառուցմանն ուղղված ներդրումային ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը: Չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների հետ կապված ինստիտուցիոնալ հարցերի վերլուծությունը և առաջարկությունների ներկայացումը,

14) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտի զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակումը: Գործող կեղտաջրերի մաքրման կայաններում (ԿՄԿ) ամբողջական մաքրման և տիղմի մշակման ծրագրերի նախապատրաստման աշխատանքներին մասնակցությունը: «Ոչ թե թափոն, այլ ռեսուրս» սկզբունքի կիրառման ապահովումը,

15) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում միջազգային փորձի և լավագույն ինժեներական պրակտիկայի ներդրման աշխատանքներին և ոլորտում իրականացվող ու նախատեսվող բարեփոխումներին աջակցության նպատակով տեղական և

միջազգային խորհրդատվական կազմակերպությունների ընտրության գործընթացներին մասնակցությունը,

16) ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին մասնակցությունը (խմելու ջրի մասով),

17) օգտագործելի ջրային ռեսուրսների վերաբաշխման ինչպես նաև այդ ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանկարային աշխատանքներին մասնակցությունը (խմելու ջրի մասով),

18) ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թվականների ռազմավարության և ֆինանսավորման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համակարգումը և համապատասխան առաջարկությունների ու հաշվետվությունների ներկայացումը,

19) ԿԶՆ միջոցառումների ծրագրով մինչև 2030 թվականը ընկած ժամանակահատվածում Ջրային կոմիտեին վերապահված գործառույթների իրականացմանը մասնակցությունը,

20) համայնքների բյուջեների միջոցներով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման սուբվենցիոն ծրագրերի նախագծերի ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) կատարում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման ու իրականացման համապատախան աշխատանքներ,

2) ուսումնասիրում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքները և ներկայացնում է առաջարկություններ,

3) մասնակցում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի արդիականացման ու նորերի կառուցման հետ կապված ծրագրերի իրականացման աշխատանքներին,

4) իրականացում է համապատասխան իրավական ակտերի, այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի օգտագործման (շահագործման) բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ,

5) ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում լավագույն ինժեներական փորձի և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ,

6) ապահովում է Վարձակալության պայմանագրով սահմանված Վարձատուի համապատասխան գործառույթների, իրավունքների և պարտավորությունների իրականացումը,

7) ուսումնասիրում և վերլուծում է Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածով սահմանված ՀԿՑ-ների և ՆՀՑ-ների կատարման վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացնում է առաջարկություններ,

8) ներկայացնում է առաջարկություններ Վարձակալի գործունեության ուսումնասիրությունների հիման վրա՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի արդյունավետ օգտագործման (շահագործման) նպատակով,

9) ուսումնասիրում է Վարձակալի գործունեության վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացնում է առաջարկություններ,

10) հսկողություն է սահմանում Վարձակալի կողմից Վարձակալության պայմանագրով նախատեսված ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման և համակարգերի օգտագործման (շահագործման) նկատմամբ՝ Վարձակալության պայմանագրով սահմանված գործառույթների շրջանակներում,

11) ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացում Վարձակալի ՊԿԱԾ-ի նախագծի, ՊԿԱԾ-ի 15%-ի չափով չնախատեսված կապիտալ ծախսերի ուղղությունների վերաբերյալ: Մասնակցում է ՊԿԱԾ-ի շրջանակներում կատարված աշխատանքների (գույքի) ընդունման-հանձնման աշխատանքներին,

12) ապահովում է ԱՏԱ-ի հետ համագործակցությունը: Ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացում ԱՏԱ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, այդ թվում տարեկան աուդիտի նախնական և վերջնական հաշվետվությունների վերաբերյալ,

13) մասնակցում է ջրային հողերի ու դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումների և նորմերի սահմանման գործընթացներին,

14) վերլուծում է Վարձակալի կողմից Վարձակալության պայմանագրով, այդ թվում 7-րդ հավելվածով նախատեսված հաշվետվությունները, ներկայացնում է առաջարկություններ և ապահովում է հսկողություն հաշվետվությունների ձևաչափերի և ներկայացման ժամկետների նկատմամբ,

15) ներկայացում է կարծիք ՀԾԿՀ՝ Վարձակալի կողմից ներկայացվող սակագների վերանայման առաջարկության վերաբերյալ և մասնակցում է դրանց քննարկմանը: Մասնակցում է ՀԾԿՀ-ի

կողմից ընդունվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտների վերաբերյալ որոշումների նախագծերի քննարկմանը և ներկայացում է առաջարկություններ,

16) իրականացնում է աշխատանքներ՝ ուղղված Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) խնդիրների ուսումնասիրությանը: Ստեղծում է կլաստերներ, ելնելով չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) խնդիրների տեղում ուսումնասիրության արդյունքներից, դրանց հրատապությունից և ներդրումների անհրաժեշտությունից,

17) մասնակցում է չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ու ծառայությունների բարելավման ու նոր համակարգերի կառուցմանն ուղղված ներդրումային ծրագրերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին,

18) իրականացնում է վերլուծություն չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների հետ կապված ինստիտուցիոնալ հարցերի մասով: Ուսումնասիրում է չսպասարկվող բնակավայրերում ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) խնդիրները և ներկայացում է առաջարկություններ, այդ թվում կեղտաջրերի մաքրման տեղային լուծումների կիրառման վերաբերյալ,

19) մասնակցում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի կառավարման տարբերակների ընտրության աշխատանքներին, այդ թվում Վարձակալի սպասարկման տարածք ընդգրկելու համար (Վարձակալության պայմանագրի 2-րդ հավելված),

20) մասնակցում է ջրամատակարարման համակարգերում կորուստների կրճատմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներին և ներկայացում է առաջարկություններ,

21) իրականացնում է ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտի զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակման աշխատանքներ,

22) մասնակցում է գործող կեղտաջրերի մաքրման կայաններում (ԿՄԿ) ամբողջական մաքրման և տիղմի մշակման ծրագրերի նախապատրաստման աշխատանքներին, ապահովելով՝ «Ոչ թե թափոն, այլ ռեսուրս» սկզբունքը,

23) իրականացնում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում միջազգային փորձի և լավագույն ինժեներական պրակտիկայի ներդրման աշխատանքներ,

24) մասնակցում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում իրականացվող և նախատեսվող բարեփոխումների իրականացման նպատակով տեղական և միջազգային խորհրդատվության կազմակերպությունների ընտրության գործընթացներին,

25) կատարում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում իրականացվող և նախատեսվող բարեփոխումների հետ կապված աշխատանքների վերլուծություններ և ներկայացնում է առաջարկություններ,

26) մասնակցում է Ջրի ազգային ծրագրի նախագծի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին (խմելու ջրի մասով),

27) մասնակցում է օգտագործելի ջրային ռեսուրսների վերաբաշխման աշխատանքներին (խմելու ջրի մասով),

28) մասնակցում է օգտագործելի ջրային ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանակարային աշխատանքներին (խմելու ջրի մասով),

29) ուսումնասիրում է թեժ գծով ու բնակչության դիմում-բողոքներով ներկայացված հարցերը, կատարում է համապատասխան աշխատանքներ ուղղված դրանց կարգավորմանը և արդյունքների մասին տեղեկացնում է դիմողներին,

30) ուսումնասիրում է համայնքների բյուջեների միջոցներով և պետական բյուջեի համաֆինանսավորմամբ համայնքներում իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի նախագծերը և ներկայացնում է առաջարկություններ,

31) համակարգում է ՀՀ կառավարության 15.03.2018թ. N10 արձանագրության 13-րդ կետով հավանություն տրված՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թվականների ռազմավարության և ֆինանսավորման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը և ներկայացում է համապատասխան հաշվետվություններ,

32) մասնակցում է գլխամասային կառուցվածքներում կառավարման համակարգերի ներդրման, ջրատարների վրա հիդրոէլեկտրակայանների կառուցման, բնապահպանական և բնօգտագործման հետ կապված հարցերի կարգավորման հետ կապված աշխատանքներին,

33) ջրային կոմիտեի պաշտոնական էլեկտրոնային կայքում տեղադրելու համար ներկայացնում է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի հետ կապված, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն,

34) ուսումնասիրում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ջրի որակի մոնիտորինգի արդյունքները և ներկայացնում է առաջարկություններ,

35) իրականացնում է վարչության հիմնական խնդիրների լուծման և նպատակների ապահովմանն ուղղված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Կոմիտեի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

7. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

8. Վարչության պետը հաշվետու և անմիջական ենթակա է Կոմիտեի նախագահին և անմիջական հաշվետու է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

9. Վարչության գործունեության համակարգումը վերապահվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում գլխավոր մասնագետներից մեկը:

11. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, Վարչության մասնագետների, Վարչության այլ աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով և աշխատանքային պայմանագրերով: